

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ
 5-33.11.01 «ՋԵՐՄԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՋԵՐՄԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
 ՇԱՅԱԳՈՐԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 5-33.11.01.03-3 «ՓԱԿԱՆԱԳՈՐԾ՝ ՋԵՐՄԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ
 ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
 ՆԿԱՐԱԳԻՐ**

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի անվանումը	Փականագործ՝ ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման
I. Դերը	Անկախ կազմակերպության կազմակերպաիրավական ձևից կազմակերպության կարիքներից ելնելով փականագործական աշխատանքների կատարում, մետաղական կամ պլաստմասե առարկաների նորոգում, ըստ անհրաժեշտության եռակցման պարզագույն աշխատանքների կատարում, ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման աշխատանքների իրականացում:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Փականագործական աշխատանքների իրականացում	
Աշխատանքային գործընթացը	-Կազմակերպությունում փականագործական աշխատանքների համար օգտագործվող սարքավորումների սարքին վիճակի ապահովում, -Կազմակերպությունում փականագործական սարքավորումների կարգաբերում, -Կազմակերպության կարիքների համար փականագործական աշխատանքների միջոցով մետաղական և պլաստմասե իրերի պատրաստում, -Կազմակերպության կարիքների համար օգտագործվող մետաղական և պլաստմասե իրերի նորոգում:
Կատարման չափանիշներ	-Փականագործական սարքավորումները կարգաբերված են ճիշտ, -Փականագործական աշխատանքների արդյունքում հանձնարարված մետաղական և պլաստմասե իրերը պատրաստված են տեխնիկական գծագրերին համապատասխան, -Փականագործական աշխատանքների արդյունքում հանձնարարված մետաղական և պլաստմասե իրերը նորոգվել են տեխնիկական գծագրերին համապատասխան:
Խնդիրների բնագավառ 2. Ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման աշխատանքների իրականացում	
Աշխատանքային գործընթացը	- Ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման համար նախապատրաստական աշխատանքների իրականացում, - Ջերմային ցանցերի սարքավորումների մաքրում, լվացում և քանդում, - Ջերմային ցանցերի սարքավորումների անսարք մասերի (դետալների) հանում և փոխարինում նորերով, անհրաժեշտության դեպքում անսարք մասերի վերականգնում, -Ջերմային ցանցերի սարքավորումների հավաքում և տեղակայում, - Ջերմային ցանցերի սարքավորումների գործարկում, անհրաժեշտության դեպքում դրանց զեղում:

Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> -Ջերմային ցանցերի սարքավորումները մաքրված, լվացված, քանդված են տեխնիկական պահանջներին համապատասխան, - Ջերմային ցանցերի սարքավորումների անսարք մասերը փոխարինված են նորերով տեխնիկական պահանջներին համապատասխան, - Ջերմային ցանցերի սարքավորումները հավաքված են և տեղակայված տեխնիկական պահանջներին համապատասխան, -Ջերմային ցանցերի սարքավորումների գելումը իրականացված է տեխնիկական պահանջներին համապատասխան:
Խնդիրների բնագավառ 3. Ջերմային ցանցերի սարքավորումների սպասարկման աշխատանքների իրականացում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - Ջերմային ցանցերի սարքավորումների աշխատանքային վիճակի պահպանման նպատակով դրանց մաքրում լվացում, յուղում, -Ջերմային ցանցերի սարքավորումների սպառվող նյութերի (վառելիք, հովացնող հեղուկներ և այլն) լրացում, - Ջերմային ցանցերի սարքավորումների աշխատանքային ցուցանիշների նկատմամբ հսկողության իրականացում՝ ըստ անհրաժեշտության այդ ցուցանիշների կարգավորում:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> -Ջերմային ցանցերի սարքավորումները մաքրվել, լվացվել և յուղվել են համաձայն տեխնիկական սպասարկման կանոնների, -Ջերմային ցանցերի սարքավորումների սպառվող նյութերը լրացվել են տեխնիկական պահանջներին համապատասխան, -Ջերմային ցանցերի սարքավորումներում ընթացող տեխնոլոգիական գործընթացների նկատմամբ հսկողության իրականացման համար նախատեսված չափիչ սարքերը կարգավորված են տեխնիկական պահանջներին համապատասխան:
Խնդիրների բնագավառ 4. Ջերմային ցանցերի խողովակաշարերի նախապատրաստում և տեղակայում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> -Ջերմային ցանցերի խողովակաշարերի եզրերի մշակում և նախապատրաստում եռակցմամբ կամ պարուրակային եղանակով դրանց միացման, - Ջերմային ցանցերի խողովակաշարերի ծռում և նախապատրաստում դրանց անցկացման պայմաններին համապատասխան, -Ջերմային ցանցերի խողովակաշարերի եռակցման աշխատանքներին աջակցության ցուցաբերում, -Ջերմային ցանցերի խողովակաշարերի պարուրակային միացումների հավաքում:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> -Ջերմային ցանցերի խողովակների եզրերը մշակվել են տեխնիկական պահանջներին համապատասխան, -Ջերմային ցանցերի խողովակների ծռման աշխատանքները կատարվել են համապատասխան գործիքների և տեխնիկական միջոցների կիրառմամբ, գծագրերին համապատասխան, -Ջերմային ցանցերի խողովակները միացվել են պարուրակային միացումներով գծագրերին համապատասխան:
Խնդիրների բնագավառ 5. Լրացուցիչ գործառույթների իրականացում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - Ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման աշխատանքների իրականացման ժամանակ աշխատատեղի նախապատրաստում, հոսանքի, սեղմված օդի մատակարարման համար անհրաժեշտ միացումների

	<p>կատարում, աշխատանքի ավարտից հետո դրանց մատակարարման անջատում, աշխատատեղի հավաքում և մաքրում,</p> <p>-Ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման ժամանակ անհրաժեշտ շրջանառու միջոցների հաշվառում, նոր միջոցների ձեռք բերման հայտերի ներկայացում,</p> <p>- Ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման ժամանակ ձեռք բերված շրջանառու միջոցների (սարքեր, գործիքներ և կյուլթեր) իր աշխատանքի վայրում պահեստավորում, պահպանում, դրանց ծախսի նկատմամբ վերահսկում,</p> <p>-Ըստ անհրաժեշտության իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունների և սահմանված կարգի համաձայ այլ փաստաթղթերի պատրաստում և ներկայցում:</p>
Կատարման չափանիշներ	<p>-Աշխատատեղը նախապատրաստվել է ճիշտ,</p> <p>-Աշխատատեղը ապահովված է հոսանքով և սեղմված օդով</p> <p>-Շրջանառու միջոցների հաշվառումը կատարված է ճիշտ,</p> <p>-Նոր շրջանառու միջոցների պատվերը իրականացված է ճիշտ,</p> <p>-Աշխատանքային գործունեության ժամանակ պահանջվող փաստաթղթերը լրացված են ճիշտ:</p>
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	<p>Պատասխանատվություն է կրում ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման ժամանակ փականագործական աշխատանքների կատարման, այդ սարքավորումների նորոգման և սպասարկման, ջերմային ցանցերի խողովակների նախապատրաստման և տեղակայման համար:</p> <p>Կյս աշխատանքները իրականացնում է հիմնականում ինքնուրույնաբար՝ համաձայնեցնելով իր գործողությունները տեղամասի պետի և տեղամասի տեխնիկական մյուս աշխատողների հետ:</p>
IV. Լեզուները	<p>-Հայերեն՝ գերազանց,</p> <p>-Մեկ օտար լեզու՝ բավարար:</p>
V. Համակարգիչը	<p>-Պարզագույն գործողություններ համակարգչով</p>
VI. Գիտելիքները	<p>Ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման փականագործը պետք է իմանա.</p> <p>- Ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման աշխատանքների իրականացման ժամանակ տեխնիկական անվտանգության և հակահրդեհային կանոնները,</p> <p>- Ջերմային ցանցերի սարքավորումների կառուցվածքը,</p> <p>-Ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը,</p> <p>- Ջերմային ցանցերի սարքավորումների սպասարկման աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը,</p> <p>- Ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման աշխատանքների իրականացման ժամանակ օգտագործվող գործիքների և տեխնիկական այլ միջոցների օգտագործման ձևերը,</p> <p>- Ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման համար կիրառվող չափիչ սարքերի կարգաբերման ձևերը,</p> <p>-Ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման ժամանակ օգտագործվող փականագործական գործիքները և տեխնիկական միջոցները,</p> <p>-Փականագործական աշխատանքների կատարման</p>

	<p>եղանակները և տեխնոլոգիական գործընթացները:</p>
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<p>Ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման փականագործը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> -Կատարել պարզագույն փականագործական աշխատանքներ, -Քանդել հավաքել ջերմային ցանցերի սարքավորումներ, -Մաքրել, լվանալ ջերմային ցանցերի սարքավորումներ, նախապատրաստել դրանք նորոգման համար, -Նախապատրաստել ջերմային ցանցերի խողովակաշարերը տեղակայման համար, մշակել խողովակաշարերի եզրերը, ամրակայել ու տեղադրել դրանք, -Կատարել ջերմային ցանցերի սարքավորումների գելում, -Կատարել ջերմային ցանցերի սարքավորումների աշխատանքի հսկում, չափիչ սարքավորումների կարգաբերում, -Պահպանել աշխատանքի անվատանգության և հակահրդեհային կանոնները:
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> -պարտաճանաչություն, -կարգապահություն, -ուշադրություն և դիտողունակություն, -վերլուծական մտածողություն, -համագործակցելու պատրաստակամություն, -հանդուրժողականություն, -նորն ընդունելու պատրաստակամություն, -հետաքրքրություն նորագույն տեխնիկայի նկատմամբ: